**ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ № 2**
**№ ՇՀԱՊՁԲ-7/2-1 ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ**

ք. Երևան 18-ը հոկտեմբերի 2017թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի պետի ՊԺԿ Կ. Կարապետյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետև Գնորդ, մի կողմից և "Մոսէքսո" ՍՊԸ-ն, ի դեմս ընկերության տնօրեն Կ. Գրիգորյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետև՝ Վաճառող, մյուս կողմից, հիմք ընդունելով 10.03.2017թ. կնքված № ՇՀԱՊՁԲ-7/2-1 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 4.1.1 և 9.2 կետերը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն Համաձայնագիրը (այսուհետև՝ Համաձայնագիր) հետևյալի մասին:

1. **Համաձայնագրի առարկան**

1.1 Սույն Համաձայնագրով Վաճառողը պարտավորվում է Պայմանագրով սահմանված կարգով և ձևով, Համաձայանագրի № 1 Հավելվածով՝ նախատեսված ժամկետներում և ծավալներով Գնորդին կամ նրա կողմից որոշված Ստացողին որպես սեփականություն հանձնել Պայմանագիրի № 1 Հավելվածով նախատեսված տեսակի և որակի շարժիչի յուղ (այսուհետև՝ Ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և վճարել դրա համար:

2. **Համաձայնագրի գինը և վճարման կարգը**

2.1 Սույն Համաձայնագրով Վաճառողի մատակարարած Ապրանքի միավորի գինը ներկայացված է սույն Համաձայնագրի № 1 հավելվածում: Համաձայնագրի ընդհանուր գինը կազմում է 223 199 998.2 (երկու հարյուր քսաներեք միլիոն մեկ հարյուր իննսունինը հազար ինը հարյուր իննսունութ ամբողջ երկու) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Ապրանքի գինը ներառում է հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները, Ապրանքի գրանցման հետ կապված, ինչպես նաև Վաճառողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

2.2 Գնորդն իրեն հանձնած Ապրանքի դիմաց վճարումը կատարում է Պայմանագրի 4.2 կետին համապատասխան, բայց ոչ ուշ քան 25.12.2017թ.:

3. **Այլ պայմաններ**

3.1. Սույն Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը, ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը:

3.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ գնման Պայմանագրով նախատեսված դրույթները, պայմանները, Կողմերի իրավունքները և պարտականությունները, Ապրանքի մատակարարման, հանձնման-ընդունման, Կողմերի պատասխանատվության հետ կապված և այլ հարաբերություններ թողնվում են անփոփոխ:

3.3. Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3.4. Սույն Համաձայնագիրը կազմված է 2 թերթից, հայերենով, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն Համաձայնագրի № 1, № 2 Հավելվածները՝ բաղկացած են 1 թերթից, հանդիսանում են Համաձայնագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3.5 Սույն Համաձայնագրով նախատեսված՝ Պատվիրատուի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտը, իսկ պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում ՀՀ ՋՈՒ թիկունքի վարչությունը:

4. **Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունը:**

| ԳՆՈՐԴ | ՎԱՃԱՌՈՂ |
|---|---|
| ք. Երևան, Բագրևանդի 5 | "Մոսէքսո" ՍՊԸ |
| ՀՀ ֆինանսների նախարարության | ք. Երևան, Նար-Դոս 75 |
| աշխատակազմի գործառնական վարչություն | «Ինեկոբանկ» ՓԲԸ |
| Հ/Հ 900011144079 | Հ/Հ 2050022417711001 |
| ՀՎՀՀ 00867415 | ՀՎՀՀ 04214892 |
| ՀՀ պաշտպանության նախարարության | |
| ՆՏԱ դեպարտամենտի պետ՝ ՊԺԿ | տնօրեն |
| Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ | Կ. ԳՐԻԳՈՐՅԱՆ |

**Հավելված N 1**

## ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

| | Գնման առարկան | Չ/մ | Միավորի գինը (ՀՀ դրամ) | Քանակը | Ընդհանուր գումարը | Ապրանքի մատակարարումը 2017թ. ըստ եռամսյակների |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | 4-րդ եռամսյակ, բայց ոչ ուշ քան 15.12.2017թ. |
| 1 | Միներալյուղ՝ Մ6գ12գ | կգ | 1 038 | 215 028.9 | 223 199 998.2 | 215 028.9 |
| Ընդհանուր գումարը՝ 223 199 998.2 (երկու հարյուր քսաներեք միլիոն մեկ հարյուր իննսունինը հազար ինը հարյուր իննսունութ ամբողջ երկու) ՀՀ դրամ | | | | | | |

**Հավելված N 2**

## Վճարման ժամանակացույց

| Հ/հ | Ապրանքի ֆինանսավորման անվանատողի անվանումը | *Նախատեսվում է ֆինանսավորել 2017թ. ըստ ամիսների | | | |
|---|---|---|---|---|---|
| | | CPV-ի կոդը | Հոկտեմբեր | Նոյեմբեր | Դեկտեմբեր, բայց ոչ ուշ քան 25.12.2017թ |
| 1 | Միներալյուղ՝ Մ6գ12գ | 09211130/2/4/3 | 223199998.2 | 223199998.2 | 223199998.2 |

* *Վճարման ենթակա գումարը ներկայացված է ամբողջական կարգով:*

**ԳՆՈՐԴ**

ք. Երևան, Բագրևանդի 5
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011144079
ՀՎՀՀ 00867415
ՀՀ պաշտպանության նախարարության
ՆՏԱ դեպարտամենտի պետի ՊԺԿ

Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

**ՎԱՃԱՌՈՂ**

"Մոսէքսը" ՍՊԸ
ք. Երևան, Նար-Դոս 75
«Ինեկոբանկ» ՓԲԸ
Հ/Հ 2050022417711001
ՀՎՀՀ 04214892

տնօրեն

Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ